**Մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի «Ջրաբերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի գործադիր մարմնի՝ տնօրենի պաշտոնն զբաղեցնելու համար**

ՀՀ Կոտայքի մարզի «Ջրաբերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը,
2.բարձրագույն կրթությունը,
3.ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիր/:
Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են ՝
1.դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2.ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3.հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը,
4.տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ/,
5.հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը /դրանց առկայության դեպքում/,
6.աշխատանքային գրքույկի պատճենը:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Փաստաթղթերն ընդունվում են 2018թ. հունիսի 12-ից մինչև հուլիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, Ջրաբերի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Ջրաբեր, 1 փողոց, 24 շենք, հեռ.՝ 094-05-90-50:
Մրցույթը տեղի կունենա 2018թ. հուլիսի 20-ին, ժամը 13:00-ին, Ջրաբերի միջնակարգ դպրոցում: